

## ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՎԵՐՋԱԾԱՆՑԱԿԵՐՊՆԵՐԸ

Դ. Ս. ԳՅՈՒՐՉԻՆՅԱՆ

Հայերենի շուրջ 200 բառակազմական մասնիկներ լեզվի անընդհատ զարգացման ընթացքում մշտական շարժման մեջ են. դրանց մի մասը տարբեր գործոնների թելադրանքով ակտիվանում է, մյուս մասը, ընդհակառակը, զրկվում կենսունակութունից, իսկ երբեմն էլ դուրս մղվում գործածութունից. որոշ ածանցներ բառակազմական նոր նշանակություն են ձեռք բերում, մյուսների այս կամ այն իմաստը խամրում-մթազնում է և այլն: Սրանք ներքին տեղաշարժերն են, սակայն ածանցական համակարգը փակ չէ: Հայերենը թեկուզև հարուստ է ածանցներով, հատկապես վերջածանցներով, այնուամենայնիվ, բառակերտիչ մասնիկների կազմը մշտապես համալրվում է. արմատական ձևույթներն ու քերականական թեքույթներն են վերարժեքավորվում, ածանցներ են փոխառվում այլ լեզուներից, բաղադրվում են գործառնող ածանցները: Նշված գործընթացների մեջ կարևոր և հետաքրքրական է արմատների իմաստային (ձևաիմաստային) և գործառական զարգացման հետևանքով վերջածանցների առաջ գալը<sup>1</sup>:

Արմատից ձևավորվող վերջածանցի կազմավորման ընթացքն ունի հետևյալ փուլերը.

ա) բարդության բառակազմական կաղապարի ձևավորում որևէ արմատական (հազվադեպ՝ բաղադրյալ) կամ իբրև այդպիսին ըմբռնվող վերջնաբաղադրիչով.

բ) բառակազմական կաղապարի ակտիվացում.

գ) բարդության վերջնաբաղադրիչը հանդես է գալիս տվյալ արմատի (բառի) բառական նշանակությունից տարբերվող՝ բառակազմական նոր նշանակությամբ. որոշակի խզում է առաջանում նախնական կամ բուն իմաստից.

դ) բառակազմական կաղապարին զուգահեռ իմաստային շարք է ձևավորվում. բառակազմական նոր նշանակությունը կայունանում և նմանակությամբ վերարտադրելի է դառնում.

ե) արմատական (արմատահիմքային) ձևույթի իմաստային (ձևաիմաստային) և գործառական արժեքի տեղաշարժն ու երկփեղկումը բառակազմական բաղադրիչի նոր՝ ածանցական արժեքի է միտում. դա ածանցակերպն է (ավելի ճշգրիտ՝ վերջածանցակերպը)<sup>2</sup>. բառական բաղադրիչն ածանցանալու ճանապարհին է.

զ) ածանցակերպից անցում է տեղի ունենում դերածանցին<sup>3</sup>. բառային ծագում ունեցող մասնիկներն ածանցի դեր են կատարում.

<sup>1</sup> Տե՛ս Դ. Գյուրժինյան, Արդի հայերենի նախածանցակերպները, «Հայագիտության և զուգարական լեզվաբանության հարցեր», պրակ Ա, Երևան, 1998, էջ 51—55:

<sup>2</sup> Ռուս. аффиксонд, суффиксонд:

<sup>3</sup> Հմմտ. Գ. Զաֆուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը, ՊՐՀ, 1995, 1, էջ 145:

է) գործառական նոր արժեքով տևաբար կիրառվելուց և իմաստային հետազոտ վերացարկումից հետո դերածանցը կարող է վերածվել վերջածանցի՝ առաջ բերելով արմատ/ածանց համանունություն:

Ածանցակերպին արմատական այն ձևույթն է, որը գործածվում է ածանցի դերով: Այն փաստորեն անցումային տիպի ձևույթ է. մի կողմից վերջածանցի դեր է կատարում, մյուս կողմից, սակայն, համապատասխան արմատի հետ պահպանում ձևային-ծագումնաբանական և իմաստային կապերը: Մ. Արեղյանը բառի նման բաղադրիչներն անվանում է վերջադիր մասնիկ՝ ածանցիկ, կամ առաջադիր<sup>5</sup>: Որոշ լեզվաբաններ ածանցակերպի ըմբռնումն առհասարակ շեն ընդունում:

Արդի հայերենի ինչպես վերջածանցների, այնպես էլ վերջածանցակերպների որոշման հարցում մասնագետների մոտեցումներն իրարից զգալիորեն տարբեր են: Տարակարծություններն ի հայտ են գալիս հատկապես բառային ծագում ունեցող ածանցներն ու ածանցակերպները վերջածանցների ցանկի մեջ զետեղելիս: Միայն մեկ համեմատություն. լեզվաբանական տարբեր աշխատություններում, օրինակ, վերջածանց են ընկալվել -զան, -բան, -մած, -որակ, -ունակ, -արկ ձևույթները<sup>6</sup>, իսկ ուրիշների կողմից դրանք համարվում են այնպիսի բաղադրիչներ, «որոնք բոլորովին էլ շեն զրկվել իրենց բուն արմատական, իմաստից և առանձնաբար անզամ իբրև նյութական իմաստ ունեցող լեզվական միավորներ են ընթանում»<sup>7</sup>, ուստի և ածանցներ չեն:

Նույն ձևով էլ միասնական ըմբռնում չկա վերջածանցակերպների հարցում: Այսպես, ոմանք ածանցակերպ են համարում բաղադրությունների հաճախական վերջնաբաղադրիչները, ինչպես՝ -դիտակ, -պաշտություն, -պատկեր, -գիտություն, -օրյակ, -տապ, -ախտ և այլն, կամ՝ -վաճառ, -գնաց, -գիր, -ցան և այլն<sup>8</sup>: Վերջածանցակերպների մասին առանձին դիտարկումներ կան տարբեր աշխատություններում<sup>9</sup>, սակայն առ այսօր փորձ չի արվել բառակերտիչ այդ միավորներն ի մի բերելու և բառակազմական-իմաստային քննության ենթարկելու:

Այբբենական կարգով ներկայացնում ենք արդի հայերենի վերջածանցակերպները՝ միաժամանակ համոզված լինելով, որ սա փոփոխական մի համակարգ է, և ժամանակի հետ պատկերը կարող է փոխվել: Համոզված ենք, սակայն, որ հարցը սպառիչ և վերջնական լուծում չի ստանա, բայց որոշակի հստակություն, անշուշտ, կունենանք:

-ԱՄՈՒ: Համանուն է -ածու վերջածանցին, սակայն բոլորովին տարբեր ծագում ունի: Իբրև ածանցակերպ ընկալվող<sup>10</sup> այս բառակազմական միավորը բաղադրվել է գրաբարի ածեմ բազմիմաստ բառի («բերել, շարժել, բանեցնել, տեղից տեղ տանել, լցնել» և այլն) ած- արմատից և -ու վերջածանցից: Մինչդեռ վերջածանցը բաղադրվել է հարակատարի -ած վերջավոր-

<sup>5</sup> Հմմտ. М. Д. Степанова, Словообразование современного немецкого языка, М., 1953:

<sup>6</sup> Մ. Արեղյան, Երկեր, հ. 2, Երևան, էջք 182—190:

<sup>7</sup> Հմմտ. Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955, Ս. էջյան, Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, Ս. Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, Գ. Բ. Զահուկյան, ժամանակակից հայոց լեզվի բառակազմություն և իմաստաբանություն, Երևան, 1989:

<sup>8</sup> Ա. Մարգարյան, ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 190:

<sup>9</sup> Զ. Ա. Հացագործյան, Ս. Ա. Ասլանյան, Միջազգային տեղմիջային տարրերի բառարան, Երևան, 1989, Ն. Մ. Միխայելյան, Ածանցակերպների միջլեզվային համարժեքները (Ռուսերենի և հայերենի զուգադրական վերլուծություն, պրակ Դ), Երևան, 1987:

<sup>10</sup> Տե՛ս, օրինակ, Գ. Բ. Զահուկյան, Նշվ. աշխ., էջք 187—188, 211, 308:

<sup>11</sup> Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Նշվ. աշխ., էջ 180:

րությունից և -ու վերջածանցից (հմմտ. ժողովածու, հավաքածու): Ածանցակերպը կերտում է անձնանիշ գոյականներ՝ «մի բան անող» նշանակությամբ, ինչպես՝ ծաղրածու, ձեռնածու, ավելածու, նվազածու, տարփածու, կատարածու, նաև ածականներ՝ ակնածու, հոգածու:

Նախատիպ ձևերը գրաբարից են գալիս. հմմտ. փայլածու, պատժածու և այլն:

-ԱՌՈՒ: Գրաբարյան առում «առնել, ձեռք բերել, կրել» բայի արմատի և -ու վերջածանցի բաղադրութունն է (հմմտ. գրք. մարդառու, վրիժառու, դիրառու «գերի (հեշտությամբ առնված)»): Բարդածանցավոր բառերի կազմում արմատական վերջնաբաղադրիչի բառային իմաստի մթագնման, -ու ածանցի հետ հաճախաբար գործածվելու և ձևաիմաստային սերտաճման հետևանքով իբրև ածանցակերպ է ընկալվում՝ գոյական հիմքերից կերտելով ածականներ (ակնառու, աչառու, փորձառու) և գոյականներ (ավանդառու, վարկառու, թռչակառու, կապալառու): Գոյականները հաճախ հանդես են գալիս ածականի ձևաբանական արժեքով:

-ԱՐԱՄ: Արածել «ուտել, ճարակել», «հովվել» բայի արմատն է, որ կենդանիների անուն գոյականներից կերտում է ձևաբանորեն երկարժեք (ածական/գոյական) բառեր՝ «պահող, արածեցնող» նշանակությամբ<sup>11</sup>, ինչպես՝ խաշնարած, սագարած, ուլարած, հորթարած, եզնարած, խոզարած և այլն: Սրանցից մեկում տեղի է ունեցել ամփոփում՝ տավարած (<տավար+արած):

Հոմանշության եզրեր կան -պահ ածանցակերպի հետ. հմմտ. հորթապահ-հորթարած, նախարպահ-նախարած:

-ԱՐԿՈՒ: Գրաբարի արկանեմ «գցել, նետել» բայից առաջացել է -արկ ածանցը, որ կերտում է գոյականներ (ակնարկ, մեկնարկ, բացարկ) և ակտիվորեն մասնակցում հատկապես բայահիմքի կազմության (ներարկել, անվանարկել, գործարկել, թողարկել): Սրան բաղադրվել է -ու վերջածանցը, և -արկու-ն որպես բառակազմական բաղադրյալ միավոր մասնակցել է մի շարք բառերի ստեղծմանը՝ գրաբարից մինչև նորագույն ժամանակներ: Ներկայումս -արկու բաղադրին ընկալվում է իբրև ածանցակերպ (հմմտ. բանսարկու, խնկարկու, խուզարկու, ահարկու, խնդրարկու, բողոքարկու):

-ԲԱՆ: Ծագում է բամ «ասել, խոսել» բայից<sup>12</sup>, որի հոգնակի Յ-րդ դեմքի ձևն է: Այն բառական արժեք է ձեռք բերել, ապա գործածվել բարդութունների մեջ, հատկապես բայահիմքերում (ալլաբանել, ընդդիմաբանել, մեծաբանել, փառաբանել, ֆաջաբանիկ «լեզվանի»):

Նոր ժամանակներում բան-ը խիստ գործուն վերջադիր մի ձևույթ է, որի մեջ ածանցական իմաստն ավելի ու ավելի գերիշխող է դառնում՝ գոյականներից կերտելով «գիտության կամ մշակույթի որևէ ճյուղի մասնագետ» նըշանակութունն արտահայտող անձնանիշ գոյականներ, ինչպես՝ լեզվաբան, երկրաբան, բուսաբան, ախտաբան, մաթեմատիկոս, համաճարակաբան, արվեստաբան, ռեաբան, սրտաբան և այլն:

Առանձին շարք են կազմում հունաբան, լատինաբան և նման այլ բառեր, որոնք նշանակում են «տվյալ լեզվի ոճով գրված, նրա բառեր գործածող»: Սրանցում վերջնաբաղադրիչի նախնական իմաստը քիչ թե շատ զգալի է. հմմտ. օտարաբան:

Նման կազմութունների ակտիվացման մեջ որոշակի դեր ունի նաև միջազգային տերմինակազմիչ -ՆՈՒ (<հուն. λουος) բաղադրիչը. հմմտ. մշա-

<sup>11</sup> Տե՛ս Ա. Ա. Մուրվալյան, նշվ. աշխ., էջ 262:

<sup>12</sup> Տե՛ս Հր. Անտոյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 353-355:

կուրսարան (կուլտուրուոգ), ծերայրան (գերոնտուոգ), միգարան (ուրուոգ) և այլն:

Վերոթվարկյալ բոլոր բառերին բաղադրվում է -ուրյուն գոյականակերտ վերջածանցը, ինչպես՝ համաճարակաբանություն, հունաբանություն, մշակութաբանություն և այլն (եզակի բացառություն՝ վերլուծաբան):

Միայն հատուկենտ կազմություններում է պահպանվել -բան ձևույթի նախնական (արմատական) իմաստը, ինչպես՝ կառակաբան, բնաբան, ֆոնոմաբան:

Հոմանիշ է -գետ ածանցակերպին. հմմտ. եղիպտաբան—եգիպտագետ, ռնաբան—ռնագետ: Նման բառազույգերում երբեմն իմաստային հստակ տարբերակում ունենք, օրինակ՝ արվեստաբան «արվեստադիտության մասնագետ» և արվեստագետ «արվեստի որևէ բնագավառի ներկայացուցիչ», «վարպետ կատարող», լեզվաբան «լեզվի մասնագետ» և լեզվագետ «լեզուներ իմացող»:

-ԲՈՒՅԺ: Բուծել «բժշկել, առողջացնել» բայի արմատն է, որ «բուժող, բժիշկ» նշանակությամբ բառեր է կերտում (դրանք համատեղում են գոյականի և ածականի խոսքիմասային նշանակություններ), ինչպես՝ ակնաբույժ, վիրաբույժ, ռևիրաբույժ, առամնաբույժ, նյարդաբույժ, հոգեբույժ և այլն: Այս գործառույթը գրաբարին բնորոշ չէ. հմմտ. դժուարաբույժ ածականը, որտեղ -բույժ-ը բայարմատի արժեք ունի:

Բառակազմական հիմք են դառնում մարդու մարմնի մասերի անվանումները, հազվադեպ՝ մարդ կամ կենդանի նշանակող բառեր, ինչպես՝ մանկաբույժ, անասնաբույժ, շնաբույժ, արևմտ. հիմարաբույժ: Առանձին է բեկաբույժ «կոտրվածքներ բուժող» բառը:

-ԲՈՒՅԾ: Բուծել «բազմացնել, աճեցնել, խնամել» (գրք. «սնուցել, պահել մեծացնել») բայի բոյժ «սնուցում» արմատն է, որից գրաբարում բազմաթիվ բառեր են բաղադրվել: Իբրև բարդության վերջնաբաղադրիչ՝ այն կահնից ավանդված մեղուաբույժ, անասնաբույժ, բազմաբույժ, պուրտաբույժ, բոզաբույժ, ծերաբույժ բառերում: Աշխարհաբարում ծավալվել է նրա իմաստային-գործառական մի կիրառությունը. բույժ-ը միանում է կենդանի նշանակող բառերին և կազմում գոյականներ՝ «տվյալ կենդանին խնամող՝ բազմացնող» բառակազմական-ածանցական նշանակությամբ, ինչպես՝ խոզաբույժ, շնաբույժ, ոչխարաբույժ, ճագարաբույժ, թոշնաբույժ, գազանաբույժ և այլն: Փաստորեն սրանք գրաբարյան մեղուաբույժ և անասնաբույժ նախօրինակ բառերի հետ իմաստային-բառակազմական մի շարք են ստեղծում: Ի տարբերություն մյուս բառերի՝ բառակազմական կաղապար է ձևավորվել:

Այս դեպքում ևս սրանց բաղադրվում է -ուրյուն վերջածանցը, ինչպես՝ ճագարաբուծություն, թոշնաբուծություն:

Սակավադեպ կիրառություն է, երբ -բույժ բաղադրիչը դրվում է բուսանուն առաջին բաղադրիչների հետ, օրինակ՝ ծաղկաբույժ, բրնձաբույժ, բուսաբույժ, պտղաբույժ, բանջարաբույժ: Կենսունակ կաղապար չձևավորվեց, և բառարաններում նմանատիպ կազմությունների փոխարեն գործածվում են ուրիշ ածանցակերպներով բաղադրություններ, ինչպես՝ ծխախոտաբույժ—ծխախոտագործ, բրնձաբույժ—բրնձացան, անտառաբույժ—անտառագետ:

-ԳԾՏ: Գիտենալ «իմանալ, ճանաչել» բայի արմատն է (հմմտ. գրք. երկնագէտ, խորագէտ)<sup>13</sup>, որ ժամանակակից հայերենում բառակազմական խիստ կենսունակ միավոր է: Իբրև բարդության վերջնաբաղադրիչ հանդես գալով՝ հեռացել է բառային նախնական նշանակությունից, որոշակիորեն

<sup>13</sup> Սրանցից տարբեր են անասնագէտ, արուագէտ, մեռելագէտ բառերը, որոնց վերջնաբաղադրիչը գիտեմ «մեղծենալ, զուգավորել» բայի նույնանուն արմատն է:

վերադարձվել և ձեռք բերել «այս կամ այն մասնագիտությունն ունեցող, այսինչ ասպարեզի դիտակ, մասնագետ» բառակազմական-ածանցական նըշանակությունը հաղորդող ձևույթի արժեք: Ածանցի վերածվելու գործընթացին նպաստում է ձևային սարքերությունը նույն արմատի սկզբնաբաղադրիչի համեմատությամբ՝ -գետ/գիտ-:

-Գետ-ը միանում է առարկա, լեզու, ազգ, մշակույթի գործիչ կամ որևէ ձյուղ նշանակող բառերին և կազմում հիմնականում ձևաբանորեն երկար-ժեք (ածական/գոյական) բառեր, ինչպես՝ ապրանքագետ, բառերագետ, գրականագետ, լատինագետ, հայագետ, կովկասագետ, շաբենցագետ, ձեռագրագետ, առևելագետ, արվեստագետ և այլն: Հոմանիշ է -բան ածանցակերպին, մյուս կողմից էլ իմաստային-գործառական ընդհանրություններ ունի ռուսերենի -вед ածանցակերպի, -ист, -лог մասնիկների հետ (հմմտ. առևելագետ — востоквед, տնտեսագետ — экономист, ֆաղաֆագետ — полнтолог):

Այս ձևույթը գործնականում բառակազմական գրեթե անսահմանափակ հնարավորություններ ունի:

-ԳՈՐԾ: Հայերենի նախագրային շրջանից սկսած՝ կենսունակ է թե՛ առանձին գործածությամբ, թե՛ բաղադրությունների մեջ: Չարագործ, բարեգործ, մեծագործ և նման բառերի օրինակով ստեղծված կառագործ «բրուտ», երկաթագործ «դարբին», ոսկեգործ «ոսկերիչ» բառերի իմաստակառուցվածքային կաղապարի հիման վրա կազմվել են բազմաթիվ ուրիշ բառեր: Դրանցում արդեն հստակորեն տեսնում ենք «աշխատանք, պաշտոն, մասնագիտություն» բառակազմական նշանակությունը, ինչպես՝ լեռնագործ, ավազագործ, զինագործ, ժամագործ, պանրագործ, փականագործ, կարելագործ, տեխտիլագործ և այլն: Բառակազմական հիմք են դառնում ինչպես հայերեն, այնպես էլ փոխառյալ բառեր, որոնք նշանակում են իր, նյութ, արտադրանք:

Որոշ լեզվաբաններ -գործ ձևույթն արդեն վերջածանց են համարում<sup>14</sup>: Իսկ ածանցակերպի արժեք այն սկսել է ձեռք բերել դեռևս դասական հայերենում, ինչպես կալ, կիր, վառ բայահիմքերը<sup>15</sup>:

Մի քանի բառում, սակայն, -գործ-ն արմատի արժեքով է կիրառվում, օրինակ՝ ասեղնագործ, ձեռագործ և այլն:

-ԴԱՐԱՆ: Դարան բառը բազմիմաստ է՝ «պահարան», «թաքստոց», «որևէ բան պահելու գաղտնի տեղ» և այլն, սակայն թե՛ հնից ավանդված բարդություններում (մատենադարան, վիմադարան), թե՛ նորակազմ բառերում (ձայնադարան, տեսադարան, ֆիլմադարան) տեսնում ենք միայն մեկը՝ «պահելու տեղ»: Ձևաիմաստային, դիրքային, բառակազմական առանձնահատկություններով հարաբերակցում է -արան տեղանիշ վերջածանցին: Սրանք բառակազմական հարանուն ձևույթներ կարելի է համարել:

Իմաստային հետաքրքրական բաշխում է կատարվել. դարան բառն ինքնուրույն գործածությամբ «բեռնված է» առավելաբար «թաքստոց» իմաստով, իսկ որպես բարդության երկրորդ բաղադրիչ՝ միայն «պահելու տեղ» (հմմտ. գրադարան), որն էլ ածանցի վերածվելու կարևոր գործոններից է:

-ՋԵՐԾ: Ծագումնաբանորեն կապվում է գերծանիմ «ազատել, քաշել հանել» բայի հետ, որի հիմքը՝ գերծ, նշանակում է «աղատ, ապահով, անվտանգ» և իրեն վերջնաբաղադրիչ հանդես է գալիս գրաբարյան բարդություններում, ինչպես՝ մոռազերծ, սեղանագերծ, մեհենագերծ, դիագերծ, դիւրագերծ: Արդի հայերենում սրանով բառակազմական կաղապար է ձևա-

<sup>14</sup> Տե՛ս Ալ. Մարգարյան, *Եզվ աշխ.*, էջ 258:

<sup>15</sup> Տե՛ս Լ. Ս. Հովսեփյան, *Գրաբարի բառակազմությունը*, Երևան, 1987, էջ 451:

վորվել, և զերծ-ը գործածվում է միայն «այսինչ բանից ազատ» նշանակութ-  
յամբ, օրինակ՝ միջուկագերծ, վարակագերծ, ակաճագերծ, մանրէագերծ,  
ախտագերծ և այլն:

-ԿԱԼ: Գրաբարի ունիմ «ունենալ, տիրել», «վերցնել, բռնել» բազմիմաստ  
բայի<sup>16</sup> երկրորդ հիմքն է (հմմտ. կալնում բռնել, տիրել»), որն իբրև վերջ-  
նաբաղադրիչ ունենք հին հայերեն բերդակալ, խնամակալ, երախակալ, քա-  
գակալ և այլ բառերում: Համաբանության օրենքով հետագա ժամանակնե-  
րում գոյականական հիմքերից -կալ բաղադրիչի միջոցով կերտվել են բազ-  
մաթիվ գոյականներ, ընդ որում «բռնող, պահող» ածանցական նշանակությու-  
նն առկա է բոլոր բաղադրությունների իմաստային կառուցվածքում: Այսպես,  
բաժակակալ, ծաղկակալ, ջահակալ, անկողնակալ, ակաճակալ, դնչակալ,  
վարսակալ, հերակալ, առանցքակալ, փամփշտակալ և այլն:

-Կալ բաղադրիչը տեսնում ենք նաև մի շարք բայերում, որոնք կազմ-  
վել են գոյականական հիմքերից՝ առանց ածականական օղակի, ինչպես՝  
ճարսլ → ճարսլակալ → ճարսլակալ-(ել), մամուռ → մամուռակալ → մամուռակալ-  
(ել)<sup>17</sup>: Նույն ձևով են կազմվել յուղակալել, ժանգակալել, ջրակալել, քարա-  
խակալել, մագակալել և այլ բայեր, որոնցում ածանցակերպը «— — — ով  
պատած» բառակազմական նշանակությու-  
նն ունի:

-ԿԻՐ: Կրել «մեջքին առնել տանել, վերցնել, ունենալ, մեկի ներգործու-  
թյան տակ լինել» բայի արմատն է, որն իբրև վերջնաբաղադրիչ կիրառվել է  
դրաբարյան բարեկիր, զինակիր, դժուարակիր, խորհրդակիր, ծիրանակիր,  
բեռնակիր բառերում, մասնավորապես Ագաթանգեղոսի երկում՝ իմաստակիր,  
խաչակիր, ծանրակիր, հրեշտակակիր: Արդի հայերենում որպես բառակազ-  
մական միավոր հանդես է դալիս «կրող, այսինչ բանին արժանացած կամ  
այդինչ բանն ունեցող» նշանակությամբ, ինչպես՝ դրոշակակիր, դափնեկիր,  
վիրուսակիր, բացիլակիր, վարակակիր, մեղալակիր, տիտղոսակիր և այլն:  
Անձնանիշ գոյականների այս շարքին զուգահեռ նույնքան կենսունակ է մյուս  
կիրառությունը, երբ -կիր-ը կերտում է իրանիշ գոյականներ, ինչպես՝ հրե-  
թիոսակիր, զրահակիր, պանելակիր, արբանյակակիր, նավթակիր, քնդան-  
թակիր, ութակիր: Ի դեպ, որոշակի է ուստի համապատասխան կազմու-  
թյունների ազդեցությունը<sup>18</sup> (հմմտ. երթիոսակիր և ракетносец):

Հոմանշություն է նկատվում -կիր և -տար բաղադրիչների միջև<sup>19</sup>. հմմտ.  
ցեմենտատար—ցեմենտակիր, զրահակիր—զրահատար, արբանյակակիր—  
արբանյակատար:

-ԿԻՅ: Կցել «միացնել, զողել, կպցնել» բայի կից «իրար մոտ, կպած»,  
«միասին, հետը» արմատից է ծագում: Իբրև բարդության երկրորդ բաղադրիչ  
հաճախական է գրաբարում, ինչպես՝ ձայնակից, գործակից, դատակից, երա-  
մակից, երգակից, լծակից, ճիգակակից, ծառայակից, զուտակից և այլն:  
Բառակազմական կաղապարը ժամանակակից հայերենում առավել ակտի-  
վացել է. կից-ը նախնական իմաստից տարբեր, բառակազմական-ածանցա-  
կան նոր («միասին կամ նույն բանն ունեցող», «ընկերակցություն կամ մաս-  
նակցություն») նշանակությամբ է հանդես գալիս՝ շարունակելով գրաբարի

<sup>16</sup> Կարելի է ասել, որ համաձին համանուններ են ձևավորվել:

<sup>17</sup> Տե՛ս Գ. Բ. Զանուկյան, Նշվ. աշխ., էջ 194—195:

<sup>18</sup> Տե՛ս Ա. Ե. Սարգսյան, Կանոնի և կիրառության հարաբերությունը հայ տերմինաբա-  
նության մեջ (Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր), պրակ 3, Երևան, 1988,  
էջ 62:

<sup>19</sup> Տե՛ս Ն. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման  
միջոցները, Երևան, 1982, էջ 281:

աՎանդույթը, ինչպես՝ հեղինակակից, հայրենակից, հանցակից, զաղափա-  
րակից, սահմանակից, խոսակից, հաղորդակից և այլն:

Նկատելի է, որ ի > ը հնչյունափոխության դեպքում գործ ունենք արմա-  
տի (կցորդ, կցասայլ, կցաշենեֆ), իսկ ի > օ-ի դեպքում՝ ածանցական մաս-  
նիկի հետ (խոբհրդակցել, քղթակցել, հարաբերակցություն, մասնակցություն):

-ՀԱՐ: Գրաբարի հարկանեմ «խփել, զարկել» բայի հար արմատից է  
ծագում: Արմատի բառական նշանակությունն ակնհայտ է փայտահար, դի-  
ւահար, զանահար, երկնահար «շանթահար», գինեհարիմ, կայծակնահարեալ,  
այսահար, եղջերուահար և այլ բառերում: Իսկ ֆնարահար բառը հիմք է դար-  
ձել բառակազմական մի շարքի, որտեղ -հար-ը իմաստափոխվել ու ձեռք է  
բերել «որևէ երաժշտական գործիք նվագող» բառակազմական նշանակու-  
թյունը, օրինակ՝ սրնգահար, ջութակահար, երգենոնահար, շեփոտահար, դաշ-  
նակահար, դուդուկահար: Թմբկահար բառի մեջ թեև կարելի է մատնանշել  
բառի ստուգաբանական նշանակությունը (թմբուկ զարկող), սակայն սա կա-  
ղապարի օրինաչափ իրացումներից է, բառակազմական հարացույցի միա-  
վոր, ուստի -հար-ն այստեղ ևս ածանցակերպ է:

Մի շարք կազմություններում սա արմատական ձևույթ է, ինչպես՝ դա-  
նակահար, նիզակահար, դաշունահար, շանթահար, իսկ հիմնականում հոգե-  
վիճակ արտահայտող բառերում՝ վերջածանց, ինչպես՝ ամոթահար, կսկծա-  
հար, դալկահար, սաբսափահար, վշտահար և այլն:

Փաստորեն վերջադիր -հար ձևույթը բառակազմական եռարժեք միավոր  
է (արմատ, ածանցակերպ, վերջածանց), բայց այսօր առավելաբար ածան-  
ցական մասնիկ է:

-ՄԵՏ: Միտիմ «մի կողմ թեքել, հակել» բայի արմատից է ծագում: Բար-  
դությունների երկրորդ բաղադրիչի դերում հանդես գալիս, ամրագրվել է «հա-  
կել» իմաստը: Հնից են վկայվել դիրամէտ, զուգամէտ, հակամէտ բառերը:  
Արդի հայերենում նման կիրառությունն ավելի է մասնավորվել. -մետ-ն սկը-  
սել է գործածվել ուսերեն (միջազգային) про- (<հուն. προ) նախածան-  
ցավոր կազմությունները պատճենելիս, ինչպես՝ ամերիկամետ (проамери-  
канский), արևմտամետ (прозападный) և այլն<sup>20</sup>, նաև սրանց նմանակու-  
թյամբ ուրիշները կերտելիս, ինչպես՝ կենտրոնամետ, ուսամետ, բուրժա-  
մետ, իշխանամետ, հայամետ, ֆաշիստամետ, ադրբեջանամետ և այլն: Բա-  
ռակազմական կաղապարը խիստ գործուն է, և նորակազմությունների թիվը  
քիչ առ քիչ ավելանում է (նախագամետ, ընդդիմամետ), նաև դիպվածա-  
յին կազմությունների հաշվին (մոսկվամետ): Ի դեպ, սրանց մեծ մասը բա-  
ռարանային գրանցում չունի:

-ՄՈՒ: Մագում է գրաբարի մոլիմ «խենթացնել»/«խենթանալ» բայի  
առանձին անգործածական մոլ արմատից, որ կիրառվել է որպես բարդու-  
թյան վերջնաբաղադրիչ՝ նշանակելով «մի բանի սաստիկ, կատաղի սիրա-  
հար»։ Հմմտ. հին մատենագրության մեջ վկայված գինեմոլ, իգամոլ, կնա-  
մոլ, մանկամոլ, կռամոլ, ուրկրամոլ բառերը, որոնք ձևաբանորեն երկարժեք  
են՝ ածական/գոյական:

Այս գործառույթը կայունացել է՝ հիմք դառնալով նորանոր կազմություն-  
ների, օրինակ՝ քմբամոլ, սրնամոլ, մաբամոլ, ազգայնամոլ, ռազմամոլ,  
քղթամոլ, գրամոլ, շահամոլ, ցուցամոլ և այլն: Բառակազմական կաղապարը  
բավական կենսունակ է, հանդիպում են նաև դիպվածային կազմություններ,  
ինչպես՝ զոբանչամոլ, խաշամոլ:

<sup>20</sup> Տե՛ս Պ. Քեղրյան, Ն. Հեֆեյան, Ռուսերենից բառային նորագույն պատճենումների  
մասին, ԼՂ, 1982, ք. 12, էջ 68:

Մոլ-ը հոմանշային հարաբերության մեջ է -սեր ածանցակերպի հետ, սակայն ընդգծված բացասական երանգավորում ունի. հմմտ. գրասեր—գրամոլ, պննասեր—պննամոլ, պատվասեր—պատվամոլ, ռուսասեր—ռուսամոլ և այլն: Որոշ դեպքերում իմաստային տարբերակումը խիստ հստակ է, ինչպես՝ մանկասեր «երեխաներ սիրող» և մանկամոլ «մանուկների նկատմամբ տոփանքով լցված»:

-ՊԱՀ: Մագում է պահել բայի պան արմատից, որ զոյական հիմքերից կերտում է «մի բան պահող, խնայող, պաշտոն կատարող» նշանակությունն արտահայտող բառեր, ինչպես՝ բնեղապան, հոբբապան, կտակապան, նանդերձապան, երկրապան, բնետապան և այլն: Հմմտ. գրաբար գանձապան, կենդանապան, քիկնապան, դոնապան, ետեղապան և այլն: Հոմանիշ է -պան վերջածանցին (<միջ. պրսկ. pan «պահող»). հմմտ. դոնապան—դոնապան, ուղտապան—ուղտապան, ձիապան—ձիապան:

-ՊԵՏ: Պետ-ը «դիսավոր, մեծավոր, իշխան» նախնական նշանակությամբ իրանյան փոխառություն է, որ հին հայերենում հանդես է գալիս որպես բարդության վերջնաբաղադրիչ, ինչպես՝ հայրապետ, քանանապետ, դահնապետ, զօրապետ, զառուսապետ, մարդապետ: Կան նաև այս բաղադրիչով ամբողջական փոխառություններ՝ մոզպետ, սպարապետ, հազարապետ և այլն:

Որպես բառակազմիչ միավոր՝ պետ-ը նշված դիրքում լեզվի զարգացման ներկա փուլում առավել կենսունակ է դարձել՝ ստուգաբանական նշանակությունից զատ ձեռք բերելով «ղեկավար, առաջնորդ, գլխավոր, պատասխանատու» իմաստները, օրինակ՝ պահեստապետ, դիվանապետ, խմբապետ, զնդապետ, նահանգապետ, ֆղաֆապետ, տոնմապետ, նարտարապետ, վաճապետ և այլն:

Այն, որ պետ-ն այլևս արմատ չի ընկալվում, կարելի է համոզվել վերոհիշյալ բառերի հոգնակի թվի կազմությունը հետևելիս. աստիճանաբար համատարած է դառնում -ներ մասնիկի գործածությունը, ինչպես՝ գնդապետներ, նարտարապետներ, մարզպետներ: Որոշ դեպքերում էլ հոգնակիի գուգաձևություն ունենք, ինչպես՝ տոնմապետ(ն)եր: Այսինքն՝ -պետ բաղադրիչն իբրև միավանկ վերջադիր արմատ չի ընկալվում:

-ՍԵՐ: Սիրել բայի արմատն է, որ վաղուց ի վեր հայերենի բառակազմության գործուն միավորներից է, նաև բարդության վերջնաբաղադրիչի դերում, ինչպես՝ գրաբար բարեսէր, զինեսէր, եղբայրասէր, զարդասէր, լեռնասէր և այլն: Արդի հայերենում այս դիրքում բառակազմական անսպառ ներուժ ունի. հմմտ. մարդասէր, այլասէր, խաղաղասէր, երածշտասէր, մարզասէր, լուսասէր, ջերմասէր, արվեստասէր, կենսասէր և այլն:

Իմաստով համապատասխանում է միջազգային տերմինակազմիչ -ֆիլ, -ման տարրերին, ռուսերեն -любя-любящ ածանցակերպին: Հոմանիշություն է նկատվում հայերեն -մոլ ածանցակերպի հետ, օրինակ՝ ռազմասեր—ռազմամոլ, զինեսեր—զինեմոլ: Ընդ որում, -մոլ-ը կա՛մ հատկանիշի սաստկական երանգ է հաղորդում բառին, կա՛մ բացասական (երբեմն էլ՝ երկուսը միասին):

-ՎԱՐ: Սա վարել «ուղղել, ղեկավարել, կառավարել», «հերկել» բայի արմատն է, որով գրաբարում ունենք կառավար, գիշերավար, գերեվար, գործավար, զօրավար, ժողովրդավար բառերը: Իմաստային-բառակազմական կաղապարումը հետագայում է կատարվել: Արդի հայերենում -վար-ը բաղադրվում է հայերեն և փոխառյալ բառակազմական հիմքերի հետ՝ նշանակելով «որևէ զբաղմունք, մասնագիտություն ունեցող»: Դրանք անձնանիշ գոյականներ են, օրինակ՝ խաղավար, կոունկավար, կոմբայնավար, խմբավար և այլն:



Այս ածանցակերպը գործածվում է նաև «որևէ քաղաքական ուղղության հետևող» նշանակությամբ՝ օտար բառերի համարժեքներ կերտելիս, ինչպես՝ համայնավար, բնկերվար, ամբոխավար (հմմտ. գրք. ծողովրդավար):

-ՏԱՐ: Տանել բայի արմատի մի ձևն է, որով գրաբարից վկայված ունենք դիրատար, բնծայատար, համբերատար, պաշտօնատար, հմմտ. նաև խնամատարութիւն: Կերտում է իրանիշ գոյականներ (և ածականներ)՝ «մի բան տանող» նշանակությամբ, այդ գործառույթով համապատասխանելով ռուսերեն -ВОЗ ածանցակերպին, օրինակ՝ ուղևորատար, բեռնատար, հրթրատար, նավթատար, բենզինատար (бензобоз), ապրանքատար (товаробоз), պանելատար (панелобоз), գազատար, ջրատար, աղբատար և այլն: Հմմտ. գազատար խողովակ (ած.) և Թուրքմենստան—Ռուսաստան գազատարը (գոյ.):

Իմաստային-բառակազմական մյուս շարքի միավորներն ածականներ են, որոնք ռուսերենի -ѢМКИЙ բաղադրիչով բառերի պատճենումներն են, ինչպես՝ մետաղատար—металлоѢМКИЙ, էներգատար—энергоѢМКИЙ, աշխատատար—трудоѢМКИЙ և այլն:

-ՏՈՒ: Սերում է տալ բայից, որի գրաբարյան երկրորդ հիմքի ձևն է: -Տու երկրորդ բաղադրիչով հին հայերեն բառերը (հարկատու, դեղատու, լուսատու, կենսատու և այլն) ընկել են կենսունակ մի շարքի հիմքում: Արդի հայերենում -տու-ն միանում է գերազանցապես նյութ ցույց տվող բառերին և արտահայտում «այդինչ բանը տվող» բառակազմական նշանակությունը: Դրանք որպես կանոն ածականներ են՝ բերատու, բրդատու, յուղատու, ձվատու, կաթնատու, մրբատու, պտղատու, մսատու և այլն: Վնասատու և ստրկատու բառերը երկարժեք են՝ ածական/գոյական:

Ածանցակերպների շարքում կարելի է զետեղել նաև -ցույց (վայրկենացույց, խոնավացույց, աստիճանացույց), -ունակ (պաշտպանունակ, թողունակ, աշխատունակ), -շափ (խոնավաշափ, ճնշաշափ) և այլ բաղադրիչներ:

Ուսումնասիրվող նյութից նկատելի է դառնում, որ վերջաձանցակերպների դերով հանդես են գալիս ինչպես արմատներ (-սեր, -մուլ, -վար), այնպես էլ բաղադրյալ միավորներ՝ արմատ+ածանց (-առու, -ածու, -արկու), արմատահիմքային ձև (-տու, -տար): Արդի հայերենի վերջաձանցակերպները մեկ-երկու բացառությամբ (-լարան, -պետ) բնիկ հայերեն արմատներ են կամ դրանցից բաղադրվածներ:

Այսպիսով, բարդութունների հաճախական վերջնաբաղադրիչների ածանցակերպ դառնալուն նպաստում են մի կողմից գրաբարի բառակազմական համակարգի ազդեցությունը, մյուս կողմից՝ ժամանակակից հայերենի բառակազմության նորագույն միտումները:

**Д. С. ГЮРДЖИНЯН — Суффиксоиды современного / армянского языка.**— В арменистике нет единого подхода к различению суффиксов и суффиксоидов современного армянского языка.

Очевидно, что вследствие семантического, семантико-формального и функционального развития некоторые продуктивные корневые морфемы, которые часто выступают в роли второго компонента сложных слов, приобретают новую словообразовательную значимость, превращаясь в морфемы переходного типа — суффиксоиды. Этому способствуют, с одной стороны, словообразовательная традиция древнеармянского, с другой — новейшие тенденции в армянском словообразовании, в частности, аналогия с соответствующими образованиями русского языка.

В статье всесторонне исследуются 23 суффиксоида современного армянского языка.